



62. ԴԱՆԳԱՆԱԿ

Կեր, չըկեր, մարթըմ կեր, ուր կընիկ, ուր էշ:

Աս մարթ շատ աղքատ էր, համեն օր կը յեր, փետ կը բերեր
կը ծախեր, ատով կապրեն: Օրըմ էլ ինչ գնաց փետե, ուր էշ կա-
պից կուճըմ, ինք գատնացավ, չուր իրը, տեսավ էշ չըկա հատե,
մընակ կուըրթինքնը մնացիր:

Ան էլ ռըկու զզկացին առից, զզկութ տը ծըղեր:

Կուճ էսաց. - Ան ի՞նչ տ'անիս:

Էսաց. - Ծզբյի ռըկու տը ծըղծըղիմ, տու իմ էշ կերար:

Ան էլ կըսը. - Տու ծի մը՝ ծըղը, իմ տակ փուրը, կանաչ վա-
ռուցըմ, մաշկըմ տը գա տուս: Ընչ ատ շըվ զանիս վար ատ մաշ-
կին, ընչ մըրազ անիս, տը կատարվը:

Փետ փուրուդ մարթ հատը փըշում փուրից, աղորթ, ուր վա-
ռուցըմ, մաշկըմ էլավ տուս:

Փետ կըտրոդ մարթ էսաց. - Նա ինչ կը, ուր իս մըրազ անիմ,
տը կատարվը:

Կուճ էսաց. - Խա՛, ինչ մըրազ անիս, տը կատարվը:

Ան էլ էսաց. - Մըկա փըշում խաց-պանիր էլներ ըստա, իս
ուտեր:

Դանկախ իինը ընչ վարուց էզար վար մաշկին, մաշկ փըռ-
վավ, խաց-պանիր տըրվավ վերա:

Փետ կըտրոդն էլ էլավ, իրը տուն:

Փելըմ մնաց, օրըմ փետ կըտրոդ էսաց. - Իս մի գեղը ռես,
գըգիր, տերտեր, իշխանքտիր, հըմեն տը կանչիմ պատիվ:

Կընիկ էսաց. - Տա հըխկը կանիմ, տատար կաց: Մենք խեղճ
ենք:

Էսաց. - Չէ, Քրիստուս, տը կանչիմ:

Գընաց գեղը իշխանքտիր, ուս, տերտեր, գըզիր, մեկել,
մեկել կանչից ուրինց տուն թավաթը: Անունց իիրծիվ մըրազ
արավ, սեղան թացվավ, հըմեն թաղլիթ աղեկ-աղեկ կերակութիր
շարվավ վերա:

Գըզիր գընաց, թագավորին էսաց. - Թագավոր ապրած կե-
նաս, նա ֆըլան մարդուն ըսկընա բա՛մ կա:

Թագավորն էլ կանչից ըզփետ կըտրող, տարավ ըզշըկ,
ըզմաշկ մոտեն խըլից, հորողկից տուն: Փետ կըտրող էլ առից
կացին, գընաց թախ կում:

Կացին ընչ տարավ թիվ, կուժ էսաց. - Ան ի՞նչ տ'անիս:

Էսաց. - Խա՛, վուզլա՛, տու իմ էշ կերար, իս քյի տը ճըղ-
ճըղիմ:

Էսաց. - Չի մը՛ ճըղճըղը, իմ տակ փո՛ւրը, դիկըմ տը կընտը-
նիս, ա՛ռ, տա՛ր:

Ան էլ առից կացին, փուրից, փուրից, դիկըմ էլավ տուս:

Կուժ էսաց. - Քանը քըշո անիս, ան ուըսկը տը ծըռտը:

Ան էլ խա՛ ճամինին հա՛ քըշո արավ, հա՛ ան ծըռտից, չուր
խասավ տուն:

Օրըմ փետ կըտրող ընչ տ'երթեր շուկեն, էսաց. - Իմ դըկուն
քըշո չանիս:

Ան էլ ուըկու արավ քըշո, ընչ արավ քըշո, տեսավ ուըսկի՛ն
ծըռտից: Դոր չուր իիրիկուն ան արավ քըշո, ան ուըսկը ծըռտից:

Իիրիկուն մարթ իրը տուն, էսաց. - Իմ դըկուն չը՛ս ըսիր
քըշո:

Էսաց. - Չէ:

Դայիմ կիյնին իիտիվ քըշո կանին, ան կը ծըռտը: Դիկ ինչ
կերա վար խալկը աղունին, քըշո-քըշո կանին, ուըսկը կը ծըռտը:

Բըօրմ օր վերա կընցընը, թագավոր կիմանա՛ ըզփետ կըտ-
րող կը կանչը, կը տանը, ան էլ կը խըլը, ըզան կը հորողկը ուր
տուն:

Փետ կըտրողըն էլ կառնը ուր կացին, կը յա թախ խեղճ
կուժ: Կացին կը տանը թիվ տը զանը:

Կուժ կըսը. - Ան ի՞նչ տ'անիս:

Կըսը. - Ապա տու իմ էշ կերար, քյի տը ճըղճըղիմ:

Կուրծ կըսը. - Զի մը՝ ճըղճըղը, իմ տակ փո՛ւրը, դանգանակըմ տ'իլնը տուս, տու վի ուզիս, ան զանը, սա՞ դանգանակ, ծերըմ գետին, մեկ մանչ գըլխում:

Մարթը չը ավտա:

Կուրծ կըսը. - Կուզիս՝ հառաջ քյի սա:

Մարթ կըսը. - Ծերըմ գետին, մեկ մանչ գըլխում:

Դանգանակը ծերըմ կը տեպնա գետին, մեկ մա ուր գըլխում:

Նուր կուրծ կըսը. - Սա՞ մա իմ գըլխում չէ:

Մարթ կըսը. - Ըզի՞ն չէ, ըզի՞ն չէ:

Ալ չըզանը:

Կուրծ անու կըսը. - Կընա՞ թագավոր հօդը տակ, սա՞ ծերըմ գետին, մեկ մանչ գըլխում, չըխո դանգանակ տը զանը, չուր մեռնը թագավոր:

Ան էլ կերթա թագավոր հօդը տակ, կըսը. - Ծերըմ գետին, մեկ մանչ գըլխում: Դանգանակ անցկում կը զանը, չուր թագավոր կը մեռնը:

Նուր անու դիկ, անու շըվ, մաշկ կը խասնը անու, կը տան կըսին. - Անու մեղքից էր՝ թագավոր մեռավ:

Փետ կըտրող, ուր կընիկ կը զանգընանան, կուտեն, կը խմեն, ծի, քյի զատ չըն իտա:

Անունք խասան ուրենց մըրազին, տու էլ՝ քում:

